

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՏ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է բաց ընթացակարգի հանձնաժողովի  
2014 թվականի «դեկտեմբերի» «18»-ի թիվ «3» որոշմամբ և հրապարակվում է  
<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ԵՔ- ԲԸԱՇՁԲ-15/41

Պատվիրատուն՝ Երևանի քաղաքապետարանը որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Արգիշտի փող. 1  
հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգ:

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի՝ *Երևանի քաղաքի էրեբունի վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):*

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի բաց ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Բաց ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ **«41» -րդ օրը ժամը «10:00»-ը: Ընդ** որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի **տրամադրումն 5550.0 ՀՀ դրամը** վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ներկայացնելու դեպքում/ այդպիսի պահանջ ստանալու օրը: /\*Վճարումն անհրաժեշտ է իրականացնել «Արդշինինվեստբանկե, Երևանի քաղաքապետարանի «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման ԲԲԸ-ի 247010087184 հաշվեհամարին /:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, ք. Երևան, Արգիշտիի փող. 1 հասցեով, - /փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ «41»-րդ օրվա ժամը «10:00»-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա փաստաթղթային ձևով, ՀՀ, ք. Երևան, Արգիշտիի փող. 1 հասցեում սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված «41»-րդ օրվա ժամը «10:00»-ին

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Գագիկ Հուրոյանին:

Հեռախոս՝ 514-194:

Էլ.փոստ՝ **e-mail gagik. huroyan @ yerevan.am**

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝-----:

*Պատվիրակու ' Երևանի քաղաքապետարան*

Հաստատված է  
ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/41 ծածկագրով  
բաց ընթացակարգի հանձնաժողովի  
2014 թ. <<դեկտեմբերի>> <<18>>-ի թիվ <<2>> որոշմամբ

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

### Հ Ր Ա Վ Ե Ր

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման **աշխատանքների** ձեռքբերման նպատակով հայտարարված բաց ընթացակարգի

Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք

ա. մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման.

բ. գնման առարկան զննել վերջինիս գտնվելու վայրում, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ, որոնք վերաբերում են հայտի նախապայտրաստմանը և պայմանագրի կնքմանը /սահմանվում է, եթե պատվիրատուի կողմից ձեռք են բերվում շինարարական աշխատանքներ /:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված սույն բաց ընթացակարգի հրավերի

### ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
6. Հայտի ապահովումը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

### ՄԱՍ II. ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները և որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ
7. Ցանկ մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն Երևանի քաղաքապետարանի (այսուհետև՝ Պատվիրատու) կարիքների համար՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով <<ԵԲ-ԲԸԱՇՁԲ-15/41>> ծածկագրով անցկացվող բաց ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման >> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

**Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ e-mail gagik. huroyan @**

**yerevan.am**

**ՄԱՍ 1**

**1. Գնման առարկայի բնութագիրը**

Գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերումը: որոնք խմբավորված են 6 չափաբաժինների

<b>Չափաբաժինների համարները</b>	<b>Չափաբաժնի անվանումը</b>
1	Էրեբունի վարչական շրջանի Տ. Մեծի 54ա շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ
2	Էրեբունի վարչական շրջանի Վարդաշեն 9 փող. 3բ. շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ
3	Էրեբունի վարչական շրջանի Արցախի 10բ և 10վ շենքերի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ
4	Էրեբունի վարչական շրջանի Խ. Դոնի 23 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ
5	Էրեբունի վարչական շրջանի Խ. Դոնի 35 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ
6	Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշեն խճ. 5/1 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա- նախահաշվային փաստաթղթերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

*\*Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.*

ըստ Քաղաքաշինության բնակավառում շինարարության իրականացում հետևյալ ոլորտի՝

<b>Չափաբաժնի համարը</b>	<b>Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).</b>
<b>1</b>	<b>2</b>
<b>1-ից -- 6-րդ չափաբաժինների համար</b>	<b>Բնակելի , հասարակական և արտադրական</b>
	<b>Էներգետիկ</b>

**2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ <<Մասնակցության իրավունքը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

2) մասնագիտական փորձառություն,

3) տեխնիկական միջոցներ,

4) ֆինանսական միջոցներ,

5) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- <<Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

Նախկինում կատարված պայմանագրերի		
առարկան	ծավալը՝ գումարային արտահայտությամբ (<< դրամ)	պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	2	3
Տարեթիվը՝ ..... թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ ..... թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ ..... թվական		
1.		
2.		

..		
----	--	--

2) մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: **Նմանատիպ են համարվում՝ շինարարական աշխատանքների կատարումը:**

**- <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝**

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից,

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

**- <<Տեխնիկական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝**

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ սույն հրավերով պահանջվող տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը
1			
2			

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներն են

Չափաբաժնի համարը	Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
<b>1-ից --6-րդ չափաբաժինների համար</b>	<b>Ինքնաթափ Բեռնատար ավտոմեքենա</b>	Ցանկացած	1 հատ
	<b>Էքսկավատոր</b>	Ցանկացած	1 հատ
	<b>Բուլդոզեր</b>	Ցանկացած	1 հատ

**- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝**

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որի համար << օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ՝ պետք է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերով ներկայացնի չձևափոխված /դրական/ աուդիտորական եզրակացություն:

2) Այն ընկերությունների դեպքում, որոնց համար << օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ՝ Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե աուդիտորական եզրակացությունը տրված է << կառավարության 29/11/2011թ. N 1931-Ն որոշմամբ նախատեսված <<Աուդիտի միջազգային ստանդարտ 700-ի>> պահանջներին համապատասխան:

**- <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝**

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.4) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են **բոլոր չափաբաժինների համար՝**

**Աշխատակազմում պետք է ընդգրկված լինեն առնվազն 2 հոգուց բաղկացած ինժեներատեխնիկական անձնակազմ առնվազն 3 տարի մասնագիտական աշխատանքային փորձով:**

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

**3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:



3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

#### 4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

***Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:***

Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում Բաց ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու պահից հաշված <<41>>րդ օրվա ժամը «10:00» -ն, ք. Երևան, Արգիշտիի փող. 1, 321 սենյակ հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար **Գագիկ Հուրոյանը**: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. սույն հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը,

բ. գնային առաջարկ,

գ. հայտի ապահովում,

դ. ծավալաթերթ

ե. էլեկտրոնային փոստի հասցեն,

զ. հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

\*\*եթե հրավերով նախատեսում է պարվիրաբան

#### 5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

##### ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Փաստաթղթային ձևով հայտ ներկայացնելու դեպքում հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի` <<Բաց ընթացակարգի հայտը պատրաստելու>> հրահանգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով` դրա վրա ավելացնելով ,փոփոխումե բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

## 6. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

6.1 Մասնակիցը հայտով` սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության` տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 7 հավելվածով:

6.2 Հայտի ապահովումը` տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա`

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

6.3 Հայտի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

## 7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև` հանձնաժողով) բացման նիստում` սույն ընթացակարգի հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու պահից հաշված <<41>>-րդ օրվա ժամը «10:00» -ին, **ք. Երևան, Արգիշտիի փող. 1, 321 սենյակ հասցեում:**

7.2 Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն` հայտերի բացման նիստում հրապարակվում են հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը), տեղեկություններ` հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման` սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, տեղեկություններ` բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ` յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի` հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին, յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը` տառերով և թվերով արտահայտված, տեղեկություններ` հայտերի հետևանքման կամ փոփոխությունների մասին:

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր` նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

7.2.2 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հայտերի և դրանց գնահատման թերթիկների երկուական օրինակները փոխանցում է հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ`

1) գնահատում է ներկայացված հայտերը.

2) գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկում:

7.2.3 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.2.4 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

7.2.5 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով:

**7.2.5.1 Գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվում են ոչ գնային պայմաններին համապատասխանող հայտերում ներառված գնային առաջարկների, իսկ շինարարական աշխատանքների դեպքում նաև ծավալաթերթ-նախահաշիվների թվաբանական ճշտությունը: Թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով.**

1) եթե առկա է անհամապատասխանություն գումարների թվային և բառային արտահայտությունների միջև, ապա հիմք է ընդունվում բառային արտահայտությունը:

2) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) աշխատանքի ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ՝ փոխելով աշխատանքի համար առաջարկված ընդհանուր գինը:

3) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի տասնորդական գրառման մեջ ստորակետի ոչ ճիշտ տեղում դնելու կամ սխալ կլորացման արդյունք է, ապա ճշտումը կատարվում է տվյալ աշխատանքի համար առաջարկված ընդհանուր գնի պահպանմամբ՝ ճշտելով միավորի գինը:

4) գնահատող հանձնաժողովը կատարված ուղղումների արդյունքների մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը՝ ճշգրտված գնային առաջարկի մասին, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

**7.2.5.2 Շինարարական աշխատանքների գնման դեպքում մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվների տարբեր տողերում նշված նույն աշխատանքների դեպքում աշխատանքների միավոր գները պետք է նույնը լինեն:** Այդ գների երկու կամ ավելի տարբերակների դեպքում կընդունվի նվազագույնը, որի մասին պատվիրատուն երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

7.2.6 Հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.7 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները

1) առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները):

2) հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, ընդ որում սույն կետի համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցման դեպքում պարտադիր է մասնակցի կողմից ծանուցման ստացման ավտոմատ եղանակով հետ հաստատումը, իսկ գրավոր տարբերակով ծանուցման դեպքում ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով հետադարձ ծանուցմամբ, կամ մասնակցին հանձնվում է առձեռն՝ նշելով վերջինիս կողմից դրա ստացման ամսաթիվը: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

3) բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը.

4) յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար, նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը.

5) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները.

**6) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:**

7.3 Գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է հանձնաժողովի անդամների ներկայացրած գնահատման թերթիկները և կազմում հայտերի գնահատման արձանագրություն, որն ստորագրում են հանձնաժողովի անդամները:

7.4 Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հետո առաջին տեղը **զբաղեցրած մասնակիցը 10 «տաս» աշխատանքային օրվա ընթացքում** հանձնաժողովին է ներկայացնում սույն ընթացակարգին իր՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ սույն հրավերի II մասի՝ հյատը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

7.4.1 Պայմանագրերը կարող են իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով: Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը: Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները).

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ: Պատվիրատուն իր համաձայնությունը տալու համար իրավունք ունի մասնակցից պահանջելու նոր գործակալի կամ ենթակապալառուի վերաբերյալ փաստաթղթեր՝ վերջինիս համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը ճշտելու նպատակով: Պատվիրատուի անհամաձայնության դեպքում վերջինս երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է մասնակցին և գործակալի կամ ենթակապալառուի փոփոխություն չի կատարվում, կամ պայմանագիրը լուծվում է.

4) մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալի պարտավորությունների համար:

7.4.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

## **8. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ**

8.1 Սույն հրավերի 7.4 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝

1. հանձնաժողովը գնահատում է սույն հրավերի 7.4 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

2. որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում Մասնակցի հայտը գնահատվում է բավարար.

2) չշտկվելու դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, տվյալ Մասնակցի հայտը մերժվում է:

**Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների**

8.2. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 7.4 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հրավերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.3. Սույն մասի 8.2 կետի համաձայն գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնումների համակարգողը և (կամ) հանձնաժողովը կարող են ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) սույն գնման գործընթացին տվյալ մասնակցի մասնակցությունը դադարեցվում է, այդ թվում՝ այդ մասնակցի հետ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը պատվիրատուների կողմից միակողմանիորեն լուծվում են.

2) մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3) ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.8 Մինչև պայմանագիր կնքելը, Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները:

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում նաև պատվիրատուի ինտերնետային կայքում:

8.9 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

**\*Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում <<10>> օրացուցային օր է:**

**Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:**

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առջինն է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը:

## **9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ**

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը:

9.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերի 8.9 կետով նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի, \*\*\*իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

9.4 Մինչև սույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով(Հավելված N 8):

10.3 \*\*\*Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում կանխավճարի չափով, երաշխիքի ձևով(օրինակելի ձևը ըստ Հավելված N 9-ի), *ընդ որում* պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը: Կանխավճարի մարման կարգը սահմանած է պայմանագրի նախագծով:

10.4 Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան հինգ օրացուցային օրվա ընթացքում:

\*\*\*Եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար

## 11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

11.2. Ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

11.3 Տեղեկագրում հրապարակելու նպատակով, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

## 12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ)

### ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.1.1 Յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել են իր իրավունքները, կամ կրել է, կամ կարող է կրել վնասներ, իրավունք ունի ահազանգելու գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին:

12.1.2 Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին ահազանգ ստանալու դեպքում՝

1) գնումների աջակցման կենտրոնն ստացված ահազանգի վերաբերյալ կազմում է արձանագրություն, եթե առկա են հետևյալ տեղեկությունները՝  
ա. պատվիրատուի անվանումը,  
բ. գնման ընթացակարգի ծածկագիրը և (կամ) առարկան,  
գ. գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առարկան:

Արձանագրությունը ներառում է նաև ահազանգողի անունը (անվանումը), եթե այն հայտնի է.

